ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Ապրիլի 24-ին, 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի ոգեկոչման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ծիծեռնակաբերդում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա հուշահամալիրի անմար կրակի մոտ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1915 թ. Մեծ եղեռնի անմեղ նահատակների:

Արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մայր Աթոռի միաբաններ, պետական այրեր:

ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆՉՈՐՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռի միաբանների թափորն ուղղվեց դեպի Մայր Տաճարի հարևանությամբ ի հիշատակ Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի և ուխտի խաչքարը, որի մոտ, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԼԵՁՈՒՄ ԿՈՂՄԻ ՄՈՍԿՎԱ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ